

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ԱՍՏՈՒԱԾ ԿԱՅ

Վասն զի գիտութիւնն Աստուծոյ
յայտնի է ի նոսա. քանզի Աստուած
իսկ յայտնեաց նոցա. զի անկրե-
ւոյթք նորա արարածովքս իմացեալ
տեսանին:

Հռովմ. Ա. 18—19.

(Փոխադրութիւն նաումանից)

Արանից մի երեսուն տարի առաջ կարծում էին, թէ գիտութեան զարգացմամբ Աստուած դուրս կ'մղուի մարդկանց գլխիւներից: ՏՀաս պատանիներն իսկ, որոնք հազիւ անշարժ աստղերը մոլորակներից զանազանել կարող էին, համոզուած էին, թէ աստեղագիտութիւնը պիտի ոչնչացնէ «Աուսոյ աղբիւրի» գաղափարը: Մարդիկ, որոնք նոյն իսկ մի երես Դարվինի գրուածներից չէին կարդացել, պնդում էին, թէ անգլիական այս նշանաւոր գիտնականը Ս. Գիլբըրը յաղթահարել և հնացած չորս աւետարանների փոխարէն բնութեան մեծ աւետարանն է քարոզել, այն ինչ կրօնական խնդիրների մէջ նա զգոյշ էր և ոչ ոքի զգացմունքը չէր վիրաւորում: Կարծես անհնար էր «կրթուած» լինել և հաւատալ հայրերի Աստծուն:

Բայց այժմ, մի սերունդ անցնելուց յետոյ, հանգամանքները փոխուած են: Հարիւրաւոր ու հազարաւոր մարդիկ փորձեցին առանց Աստուծոյ ապրել: Բայց այդ կեանքը աւելի լաւ չէր, քան նախկինը: Հիւանդներն ու մեռնողները զրկուած էին վերջին, սրբազան մխիթարութիւնից, կեանքի մարտիկներին պակասում էր դէպի տիեզերքի յաւիտենական կարգաւորութիւնն ունեցած վստահութիւնը, մարդկային կեանքը աւելի արտաքին դարձաւ, աննպատակ, և հոգւով աւելի աղքատ քան առաջ: Մարդ-

կանցից առնում էին սրանց հին հաւատը առանց կարողանալու նորա փոխարէն մի ուրիշ բան տալ. Բնութեան վարդապետութիւնն առանց Աստուծոյ, զուրկ է իրերի ներքին միութեան գաղափարից: Ո՞րտեղից: Ի՞նչու: Կեանքը կորցնում է իւր նպատակը առանց Աստուծոյ: Այն ներքին թռչիւքը, որ սպասում էին Աստուծոյ գաղափարի մերժմամբ, չիրականացաւ: Այդ է պատճառը, որ անհաւատութիւնը ձայնը քաշեց և մարդկանցից շատերը նորից հարցնում են. «Մի՞թէ Աստուած չկայ»:

Աստուծուն կրկին որոնելու, գտնելու տենչը անկասկած այսօր շատ մեծ է: Ծաղրը կորցրել է իւր խայթոցը. այժմ ոչ ոք ցանկութիւն չունի այլ ևս հաւատն առ Աստուած ծաղրելու: Այդ մասին այլ ևս չեն խօսում, որովհետեւ իրենք ևս տատանւում են: Այս տարտամ լռութիւնը գէպի նոր հաւատը բարձրանալու առաջին աստիճանն է: Բայց այդ նոր հաւատը հին վարդապետութեան կրկնութիւնը լինել չի կարող, որովհետեւ նա այլ ևս բաւականութիւն չի տալիս: Քրիստոնէական հին ճշմարտութեան վերայ պէտք է նոր հաւատի տաճարը հիմնենք, որով մենք և մեր որդիքը ապրել կարողանանք: Մենք իբրեւ նորագոյն ժամանակի մարդիկ հետեւում և ընդունում ենք գիտութեան ճշմարիտ եզրակացութիւնները, ուրախանում ենք ընտելեան մէջ թագնուած գաղտնիքների լուսաբանութեամբ. բայց չենք դադարում իբրեւ իսկական կրթուած մարդիկ տեսանելի իրերի յետեւ Անտեսանելին և պատահական երեւոյթների մէջ յաւիտենական Կամքը որոնելու: Աստուած ներգործում է տիեզերքի և մեր հոգեւոր կեանքի մէջ: Այսօր ևս ինչպէս և հազարաւոր տարիներ առաջ, արեգակն ու լուսինը, լեռներն ու ծովերը անսահման զօրութեան յայտարարն են, այն զօրութեան, որ իշխում է կեանքի և մահուան վերայ: Աստուած կայ և կմնայ յաւիտեան քօղարկուած իւր գործերի անհունութեան մէջ, և ուր փոքր ինչ այդ քօղը բարձուած է, այնտեղ ճառագայթում է նորա որբաղան կամքի լոյսը:

Գ. Վ. Յովսէփեան